



ԵՐԾՈՒՄ

ՎԱՅՊՈՒՐԱԿԱՆ

ԹԻՌԻՑԵԱՄ ՀԱՅՐԵՆԱԹԻՐ ԹԵՒՕԳ
ՅԱՐԺՐՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԻՆ ՎԱՐԱԴԱՅ

ԽՐԲԱԴԻՐ ՀԱՅՐԵՆԱԹՈՍ
ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1858 • ԹԻՒ 9 •

ՊԱՆՏՈՍՊ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՎԱՅՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԺՈՒՈՅՆ
Ի ՎԱՐԱԴ



THE HISTORY OF THE

REIGN OF THE GREAT MONARCH

OF THE ISLAND OF GREAT BRITAIN

AND OF THE KINGDOM OF IRELAND

FROM THE FIRST SETTLEMENT

TO THE PRESENT TIME

BY

JOHN HUME

ESQ.

OF THE BARR

AT EDINBURGH



ԱՐԾՈՒՒ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՌՅԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԹԵՒՕՔ
ՅԱՐԺՐՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԻՆ ՎԱՐԱԳԱՅ
ՈՐ 'Ի ՎԱՆՏՈՍՊ

ԱՎԱՆԴԻՄ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ
ԵԿԵՂԵՑԱՇԻՆ ՀԱՐՑՆ

ՄՈՎՍԵՄ ՔԵՐԹՈՂԱՀԱՅՐ ԱԿՆԱՂԻՐ ՀԱՅԱՑԻ
'ԻՊՐՈՒԹԵԱՆ

Ի վերջին դարս այն ինչ տղխտութեամբ գիշերացեալ որ
դէք մօրն Այրարատայ սթափեցին զքուն թմրութեան եւ
'ի շորից ծագաց աշխարհի զաչս իւրեանց 'ի շողջողուն կա
տարն Մասեաց դարձուցին, եւ ծանեան ճմարտիւ թէ « ծառն
արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն », այնուհետեւ պարտ
անձին վարկաւ ամենայն ոք գրադէտ ջահ իմաստութեան 'ի

բռին կալեալ իուզել որոնել մանրանկատ թէ ո՞րք արդեօք
 'ի դարս հնութեան երախտաւոր գտաւ ազգին իւրոյ եւ ո՞րք
 զիմաստութեան փոյթ կալաւ զլոյս տարածել 'ի սիրտ հայ-
 կածին մանկուոյ : Գտան արդարեւ առաջինք եւ յիտինք
 բաղումք , բայց ոչ գտաւ հաւասար քերթողահօրս մեծի ա-
 մենայնիւ բարի՝ ամենայնիւ լրացեալ , ամենայնիւ բարերար .
 որոյ վասն եւ բազում ճառագրութեամբ եւ Ներքողական զո-
 վեստիւ յաճախ դատուեցաւ եւ պատուի . զի ինքն մահկա-
 նացու գորով անմահ զիւրն եթող յիշատակ . ինքն պատկազիր
 ամենայն հայածին քաջաց եւ Եկեղեցաշէն հարց . բայց աւանդ
 զի ոչ գտաւ որ առ իւրով ժամանակաւ , զի եւ նորին զվարս
 չնաշխարհիկ ըստ իւրումն արժանաւորութեան 'ի գիր դրոշ-
 մեալ յետնալոցս խրատ բարեսաց . եւ 'ի մխիթարութիւն թո-
 դեալ լինէր . որոյ վասն 'ի բազմաց զսակաւն ունիմք 'ի ձեռին
 յիշատակարան անըսողիւս վարուց նորին :

Սոյն սա էր 'ի հռչակաւոր երկրէն Տարօնոյ՝ Խորէն գեղ-
 ջէ , որով եւ կոչեցաւ Մովսէս Խորենացի կամ Տարօնեցի . մեր-
 ձաւոր ազգական երանելոյն Մեսրոպայ , եւ վասն առաւելաւ
 գոյն խաղալոյ շնորհաց 'ի վերայ նորին՝ 'ի տղայական տիս
 հասակի իւրոյ ընտրեցաւ յաշակերտութիւն հոգեջան թարգ-
 մանչաց մեծին Սահակայ եւ Մեսրոպայ եւ գտաւ յառա-
 ջադէմ եւ զարմանաւոր քան զբազում հասակակիցս իւր , որոյ
 վասն եւ 'ի լրումն հմտութեան քաջի ուսման իւրոյ , շրջեցաւ
 յԱթէնս՝ 'ի Հռովմ եւ 'ի բոլոր Յունաստան եւ յայլ իմաստ-
 նաճախ քաղաքս՝ երկար պանդխտութեամբ . յորում եւ ժո-
 ղովեաց բազմապատիկ հմտութիւնս եւ ճշկրիտ տեղեկու-
 թիւնս աշխարհագրական եւ հռետորական , որովք կոչեցաւ հայ
 Հովերոս : Ախցաւ փարթամացաւ ոգոյ եթմաթիւ հզօր
 ճրիւք . որովք միշտն գովաբանի 'ի բովանդակ գրաւոր աշխա-
 տութիւնս իւր եւ 'ի վարս հրեշտականման : Բանդի գտաւ
 քաջ պատմագիր . 'ի ձեռն որոյ նորոգեցան հայաստանեաց փո-
 շտեալ յիշատակարանք , եւ մանկաւ թորգումածին ծանեան
 թէ չեն որդիք անհարսզատ հօր : Հայր բանաստեղծից , վասն

զարմանալի շարականաց իւրոց եւ բանապտեղծական գրուածոց : Ճարտասան՝ որպէս երեւի 'ի բովանդակ՝ գործս իւր՝ մանաւանդ 'ի հրաշագլիծ ճառն Հովսիսմեանց : Քաջ աշխարհագիր, որով յարդ զարմացուցանէ զհմտութեամբ լցեալ Եւրոպացի աշխարհագէտս, վասն ճշգրիտ տեղեկութեան իւրոյ եւ որոշ բաժանման հանուր մասանց աշխարհիս. առ որ չեհասայնմ դարու եւ ոչ միոյ արքունական աշխարհագրի ծանօթութիւն : Թարգմանիչ անզուգական, զի սակս կարի մըթութեան թերի մնացեալ մասունս աստուածեղէն տասից թարգմանութեան, սա 'ի լրումն էած : Քաջ երաժիշտ եկեղեցւոյ, որպէս երեւի յԱսոր ժողովեալ, յԱնթառամ ծաղիկ, Մարմննացեալ 'ի կուսէն եւ յայլ բազմաթիւ շարականս եւ 'ի տաղս իւր : Մարդարէ, ըստ ընտրելագոյն մարդարէից տանն Խորայէլի. զի որպէս նոքին վասն Հրէաստանի մարդարէանային՝ եւ նորս Մովսէս վասն Հայաստանի համարձակախօս մարդարէանայ : որպէս քաջեղէպ երեւի 'ի թուղթն՝ որ առ Սահակ Արծրունի, ըստ այնմ. «քեզ ասեմ իշխանդ արծրունեաց, եցոյց ինձ տէր, զի յորդոց քոց երեք եղբարք վասն Քրիստոսի 'ի մահ մատնեալք՝ երկուքն արեամբ վկայք լինին Քրիստոսի, եւ մինն վրիպեալ 'ի նոցանէ եւ ոչ յայսմ վայելէ : Վասն նոցայ Աստուած զթագն թաղաւորին Սենեքերիմայ յորդիս քո դարձուցեալ՝ յերկարաձգէ յերկրի : Եւ Բագրատունոյդ ասեմ, յիշէ տէր զբան իւր, եթէ թաղաւորք 'իքէն ելցեն, եւ թաղաւորէք 'ի դուին. եւ այլ ինչ չունիմ ասել ձեզ յորժամ տացէ տէր տեսանել» : Այս մարդարէութիւն անվրէպ կատարեցաւ 'ի ժամանակի իւրում, որպէս տեսանի յազգային պատմութիւնս :

Այսոքիւք եւ առաւել քան զսոսին պերճացեալ բանասիրական եւ հնագիտական տեղեկութեամբ, իբրեւ զնաւ շահաբեր բացեալ զառաքաստ կարօտանաց իւրոյ եւ տուեալ սիրոյ հողմոյն շնաշխարհիկ հայրենւոյ 'ի բնականունդ յիւրն մայրենի գիրկ ճնպեալ հասանէր՝ ընդ այլ ընկերակիցս իւր : Տարիանօք սիրոյ միտ եղեալ՝ զտաղանդ ամենիմաստ հմտու-

Թեան իւրոյ 'ի սեղանաւորս 'ի միտս Թորգոմածին մանկանց
 տարածել : Աթենական կենդանի ձեմարանն յափանց Աղ-
 րիական ծովուն անդր քան զՎոնկասեան լերինս Այրարատ
 խաղայ : զի փափկասուն որդիք մօրն Այրարատայ մի 'ի ծով
 եւ 'ի ցամաք վշտմբեր զնացիւք գեղեցեալ՝ զԱթէն, զՀուլմ
 եւ զԱղէքսանդրիա որոնեսցեն եւ մի ծածկեսցի յաջից նո-
 ցին նուիրական դադաթ ծերունոյն Մասեայ, առ որով վառի
 սէր ազգային եւ զգացմունք հոգեւորական : Բայց աւանդ
 եւ եղունկ զի մինչ սպասէր խոնջեալ որդեակն մայրենի գրկաց
 ողջագուրման եւ ինտրեյագոյն սուրբ հարց իւրոց վարդա-
 պետաց մրցանակի պատկման, Ո՛հ դուժ եւ կական դիմաւո-
 րեցին ինքեան. զի'նչ՝ Սահակ եւ Մեմրովպ երկոքին լուսալիւ
 ճրագունք Այրարատու եւ բոլոր հնչութեան, չիջեալ եւ
 նսեմացեալ են մահումբ. Ղուամշապուհ ուսումնատենջ Թա-
 գաւորն չէ 'ի միջե եւ ոչ երեւելի խորհրդական. անկեալ կայ
 դիտութիւն իբրեւ սնտոիք անպիտան եւ խանգարեալ ամե-
 նայն կարգ ճշմարտակարգ : Այլ զկէի նյութիկ զի'նչ երանե-
 լիւ Մովսէս՝ բաղդն անագորոյն դարձոյց զերեսս իւր 'ի տա-
 նէն Հայկայ, չարչարել ունի զգա՝ մինչեւ զիւրն առցէ յա-
 դուրդ : Մի՞ տապնապիր մի շտապեր մի գոչեր զի յունկս
 մեռեալս ցնդին բանք քո անդին. երթ. երթ քեզ ընկեր եւ
 ասպնջական զողբերգու մարդ արէն Երեմիսս գոչեա՛ն նիստ եւ
 ողբա՛նա զհինն՝ դու զնորն Իսրայէլ. եւ սկիզբն արա ողբալ
 աւասիկ զՀայաստանն քո սրտառուչ եւ մորմոքեցուցիչ ե-
 ղանակաւդ : « Աղբամ զքեզ Հայոց աշխարհ, ողբամ զքեզ
 հանուրց հիւսիսականաց վեհագոյն, զի բարձաւ Թագաւոր եւ
 քահանայ, խորհրդական եւ ուսուցող, վրդովեցաւ խաղաղու-
 Թիւն, արմատացաւ անկարգութիւն. . . : Աղբմիմ քեզ եկե-
 ղեցի Հայաստանեսց. խրթնացեալ 'ի բարեգործութենէ բեմ-
 բին, 'ի բաջէն զրկեալ հովուէ եւ հովուակցէ » եւ այլն :

Բայց դու հայկազն մանկտի աստանօր քաջ 'ի միտ առ
 հանդէս աստուածպաշտութեան քերթողահօրս Մովսիսի. զի
 սակս անտանելի վշտմբերութեան իւրոյ եւ անպատիւ անար-

գանաց՝ փոխանակ լքանելոյ եւ զիմաստութիւն յարդող ազննս
 դիմելոյ, հանդէս աստուածաշտուութեան իւրոյ պայծառ փայ-
 լեցուցեալ, նստաւ միայն լռիկ հայրենի 'ի տան իւրոյ մատոյց
 հարկանողաց իւրոց զծնօրս, լցաւ նախատանօք անախտան
 մարդկանց : Եւ 'ի մնջիկ լռութեան անդ փայլեցաւ անհա-
 մեմատ առաքինութեամբ, 'ի վեր քան զամենայն խստակրօն
 ճգնաւորսն . Որոյ գովեստ ժամանակակիցն իւր Սահակ Արծ-
 րունի սակաւ՝ բայց ազդու բանիւ համառօտէ այսպէս՝ « Հը-
 բեշտակ եւ սպասաւոր մեծութեանցն Բրիտտոսի յերկրի երկ-
 նայինդ ցուցեալ այր երկրակենցաղ եւ լուսաւորիչ խաւարե-
 լոցս , 'ի վերջին դարուս երեւեալ լոյս աննուաղ, որպէս ցաշա-
 կերտսն սաաց Տէր . դուք էք լոյս աշխարհի : Եւ մեք կամիմք
 ցնծալ առ ժամանակ մի 'ի լոյս քո , որ տուարդ մեզ երկրորդ
 Սահակ եւ Մեսրոպ յետ գնալոյ նոցա առ Աստուած : Վասն
 որոյ երկրպագութիւն հաղցէ 'ի սուրբդ . . . , աղաչեմ փութա
 տեսանել զմեզ . աշխատեա եւ հանգիր առ քո որդեակքս , զի
 օրհնեսցուք 'ի բէնոյ : Անտուն, անուրեք, պարկաբարձ, միայն
 ցուպ 'ի ձեռին շրջէր յիւրական հայրենի 'ի տան կենդանի
 տապանակն հայաստան աշխարհի, փրկիչն հայկերան մանկ-
 տեաց 'ի հեղձմանէ խաւարամած ջուրքն տգիտութեան .
 չունէր տեղի օթագայելոյ եւ հանդստեան հոգեկիր թանգա-
 րանն հայկական դարութեան . անպատիւ եւ անտերունչ շըր-
 ջէր , պատուեալն յԱթենական ձեմարանի յաղթական պսա-
 կաւ : Սփոփիչ մեծագուննի ցաւոցն միայն դրոց մխիթարու-
 թիւնն գտեալ՝ վասն այն զօր ամենայն անխոնջ 'ի թարգմա-
 նութիւնս տառից Աստուածականաց՝ իմաստասիրաց եւ ան-
 զուգական շարամանածոյ գրուածոց պարասէր : 'ի մէջ
 բազմաթողով պերճափառ դատու Հայ իշխանաւորաց իւրային
 ժամանակի, միայն Սահակ Բագրատունի եւ Սահակ Արծրու-
 նին գտան ասպնջական խոնջեալ վաստակաւոր Ս . Հօրս : որոց
 յորդորանօք գրեաց զհրաշալին զայն պատմագրութիւն ցե-
 ղապետութեան Հայոց . սկսեալ յարմատոյն մերոյ եւ հասոյց
 մինչեւ ցիւր ժամանակն . ուր եւ՝ ուրեք ուրեք յնթացս աշ-

խառութեան իւրոյ սրտառուէ կերպիւ զիւրն հարիւրամանց
ծերութիւնն 'ի մէջ բերեալ, խնդրէ ներել այնմ եւ մի տալ
աւելի աշխատութիւն Սորայն անմահական յիշատակէ գիրքն
Պիտոյից . Աշխարհագրութիւն բովանդակ հոգադնոյցս, ճանաչ
պարհորդութիւն Հռիփսիմեանց, Շարա'անք եւ այլն :

Հայտնի անկոնջ պարանկեալ երկարած գեցան, ցանկալի
ամբ կենաց իւրոց ցհարիւր եւ բսան, խորին ծերութեամբ
վախճանեալ 'ի վերայ Եպիսկոպոսական ծաղկեալ գաւազանին
իւրոյ 'ի Բագրեւանդ . ուր եւ եգաւ 'ի դիր հանգստեան նոյ
րոգիչն հայացի դպրութեան . որոյ անըստգիւտ վարուց յիշա
տակ մանկտի հայոց իւր 'ի միմունջ առեալ պաքտուորի դա
րուց 'ի դարս երախտապարտ մտք պատիւ մատուցանել :

(Ն) ուրեմն աղերս պաղատանաց աստանօր ձեր առաջի
արկանի ո՛ պաշտօնեայք . հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ՝
նմանօղ լինել զարմանալի վարուց խորենեան սուրբ՝ կրօնասէր
եւ ազգասէր Հօրս, եւ մի սակս փոքու ընդդիմութեան բարւ
ձի Թողի արարեալ կասեցուցանէք զբանաւոր եւ զգրաւոր
պաշտօն ձեր, որ 'ի պէտս շինութեան եւ հաստատութեան
Եկեղեցւոյ Աստուծոյ է : Զի եթէ չգտցի յարգող ձեզ ըստ
ձերումն պարտուպատշաճի, մի լիցի ձեզ զայրանալ մի խռովի
եւ որ չարն է գերեսս յԱյրարատայ դարձուցանել մտա
բերէք, յորում հանգչի զգալի եւ իմանալի տապանն ապրե
ցուցիչ : Եւ դուք ազատածին իշխանք՝ նմանօղ նախանձելի
վարուց Բագրատունի եւ Արծրունի Սահակեանց լերուք, յար
ւել իմաստից եւ իմաստասիրաց . զի եւ ձեր անուն ընդ նոսին
բաղձրագոյն յիշատակութեամբ յիշատակեսցի դարուց 'ի
դարըս : Նսեմացան անկան Բագրատունի եւ Արծրունի ճոխ
փառաւորութիւնք եւ արք անուանիք . բայց կեղանի կայ եւ
մնայ ցանկալի անուան Սահակեանցն՝ որք յարգեցին զիմաս
տութիւն, եւ զսիրողս նորին : Տեսէք եւ ձեր եղծանի վայել
չութիւն ճոխութեան՝ փոշիանայ շինուած ապարանից . բայց
մի ընդ նմին եւ զանուն 'ի չիք կորիցէ, ըստ Սաղմոսեան բա
նին « Անցի եւ ահա ոչ էր՝ խնդրեցի եւ ոչ գտաւ տեղի նոյ

իսն » մահկանացուք ծընայք զանմահ ձերն յիշատակ մի
ծուլանայք Թողուլ յերկրի, զի այն է բաժին Գրիստոնէի, որ
մատնցոյց առաջնորդելոց է ՚ի լուսնածեմ վայրն երանական ՚ի
հայրենին Աստուածաբնակ :

Ա . Մ . Ա

ՏԱՐԱԺԱՄ ՊԱՆԴԻՏԻԼ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ՀՕՐ

ՎԱՆԱՅՍ Ի Կ՝ ՊՕԼԻՍ

Ազգային յառաջագիմութեանը համար՝ ո՛ր եւ իցէ նոր
դործի մը ծեռնամուխ եղօղ հայրենասէր անձինք , փորձ աւ
ռած են եւ գիտեն թէ ինչ տարժանելի դժուարութիւնք
եւ արգելքներ կը դիմաւորեն , եւ թէ ինչ աստիճան անընկ-
ձելի սիրտ եւ երկարատու համբերութիւն պէտք է ունենալ ,
որ նոյն լեռնացեալ դժուարութեանցը յաղթելով՝ իւր հայ-
րենասիրական պարտքն լեցունէ : Եւ այն ալ՝ այն պիտի դիպ-
ուենցող երկրն մը մէջ , որն որ հարիւրաւոր փարսախներով
հեռի կըմնայ Միջերկրական եւ Պոնտոս ծովուց ափունքնե-
րէն :

Դէ պէտ՝ երկրորդ տարին կը բոլորի ահա , որ Արծուին
Վասպուրական իւր հայրենիքը դարձած եւ շնորհիւ Ազգիս
լրութեան իւր կայանքը Վասպուրականի սիրտ Վարազայ վան-
քին մէջ հաստատուելի . բայց զանազան զբաղմունքներէ եւ
տարժանաւոր դործերէ ոչ կարաց բնաւին հանգիստ գտնալ ,
որ իւր հայրենասիրական պարտքն ըստ արժանոյն պարտու-
պատշաճ կերպով ՚ի գլուխ տանէր : Ուստի եւ այս ծանր
զբաղմանց եւ բաղմատեսակ արգելքներուն մէկ վերջմը տա-
լու նպատակաւ , այս երկրորդ անգամ եւս ՚ի Մայրնքաղաքն
Վ. պօլիս դիմել որոշեց : Վասնորոյ նախ պատրաստեցաւ Սուրբ
Ուխտիս եւ իւր հոգեւորապէս մխիթարութեանը համար, Սուրբ
եւ հաշտարար Պատարաքն մատուցանել . յորմէ հաղորդեցան
բոլոր զպրօցական ժառանգաւոր մանկունք : Անկէց ետեւ

Վանայ Այդեառանու երեւելի եկեղեցիք, յատկապէս սրտաշարժ եղանակաւ հրաժարական օրհնութիւն խօսեցաւ . եւ Սուրբ Պատարագ մի եւս յԱնկուսներու Սուրբ Առաւածածին եկեղեցին մատոյց 'ի յիշատակ նախնի ննջեցեաց իւրոց :

Բազմաց սիրելի եւ երախտաւոր Ազգասէր հօրս՝ այս հրաժարական օրհնութեան լուրն երբ տարածեցաւ ամէն կողմ ալ անկէց ետեւ տեսնալու արժանաւոր քան էր՝ այն ջերմեռանդ հայրենասէր ժողովրդոց խռճնօրէն զիմեցումն . որ հեռաւոր եւ մօտաւոր գիւղօրէից եւ քաղաքէն ամենայն սիրով կը փութային նորին հրաժարական օրհնութիւնն վայելելու : Որոնց հետ սրտառուչ եւ միանգամայն քաջաբերական եւ զանակաւ իստած ժամանակին չմընաց բնաւ սիրտ՝ որ յարտասուս չփոքէր . ամենայն ոք խորին զգացմունքներով անոր հայրենասիրական ջանից եւ գործոց յիշատակն իւր աչաց առաջը ունելով՝ չէր կարող իւր զայրացեալ սրտի յորդաբուխ արտասուքը փոքր ինչ զսպել եւ մտերմական երկու բառ շարունակ արտասանել :

Բարձրապատիւ կուսակալին ներկայացած ժամանակին մեծ ընդունելութեամբ պատուասիրեց զինքը եւ Վանուց կողմանէ եղած յանձնարարութիւնն ալ սիրով ընդունելէն 'իզատ, մեծամեծ յոյսերով ալ քաջաբերեց զինքը, որ այն կողմանէ բոլորովին միամիտ մնայ :

Նոյն գիշերուան ժամը տասին էր՝ երբ ժառանգաւորաց դասը իւր սիրական ձագուներ մեծ գորովանօք իւր քաղցր հայրագութ թեւերուն տակը առած սիրաշահելով եւ ողջագուրելով կ'օրհնէր՝ եւ կ'քաջաբերէր՝ իրենց ուսման մէջ լաւ յառաջ երթալու համար : Անկէց ետեւ ալ մինչեւ Շահպաղի ըստած գիւղն եւս նոյն օրինակ խօսելով եւ յորդորելով Նղիայի նման երբոր յառաջ կերթար՝ շատմը Նղիսէներ իւր ըղձալի բարբառոյն ունկնդիր ունելով , եւ « Ճանապարհ բարի քրիստոս » Երգն որ գեռ սրտառուջ եղանակաւ ամենուս սրտին մէջ կ'թուփուայր՝ մէկ մի ալ ո՛հ ծածկեցաւ կարօտելոցս յաչաց : Զուր տեղ իւր սիրասուն ձագուց երամն

սրտի բարախանօք եւ յորդ արտասուաց կաթիններով կ'դռ-
 չէր իւր ետեւէն՝ հայր հայր պարծանքդ Վասպուրականի եւ
 պսակադիրդ հայրենեաց . . . : Գնաց հեռացաւ պանդխտու-
 թեան ամպն մէջ տեղ մտնելով՝ զրկեց ամէնքս մէկանց նորին
 հայրական խանդաղատանաց : Եւ այսպէս դարձան ամէն սի-
 րասուն բարեկամք լի տրտմութեամբ իւրեանց տեղ, դարձան՝
 եւ մանկունք ժառանգաւորք 'ի սուրբ Ուխտն իւրեանց 'ի-
 Վարագ . սղակիր սրտիւ՝ բայց լի յուսով, ակնկալեալ մեծա-
 րու հայրենասիրաց առատ եւ անվերջ խանդաղատանաց , որ
 քիչ միջոցով կրկին իւրեանց երանաշնորհ վերատեսուչ քաղց-
 րադու թ հայրն՝ ինքեանց պիտի դարձունեն լի՝ գոհունա-
 կութեամբ :

Որուն համար ալ իւր ամենօրեայ երեկոյեան Գոհացողա-
 կանին վրայ՝ այս երեք տունն եւս աւելցուց եւ սկսաւ շա-
 րունակել ասելով :

» Ի հայաստան աշխարհի ժառանգաւորաց զանդրանիկ
 » վաժարանս հաստատող հայրենասէրն եւ նորին յառաջա-
 » դիմութեան բանիւ եւ արդեամբ 'ի սէր աշխատողսն, կրկին
 » կենօք պայծառացո՞ 'ի յաւիտեան . ամէն :

» Ս'եծաջան աշխատութեամբ վաստակաւոր հօր վանացս
 » կեանս ելիարս եւ խաղաղականս պարգեւելով , 'ի պաշտօն
 » Ազգասիրութեան եւ արգիւնաւոր աշխատութեան զօրա-
 » ցուցեալ արիացո՞ . ամէն :

» Թագաւոր երկնաւոր զհամայն միաբանութիւնն սուրբ
 » Ուխտիս եւ զեկեղեցանոսէր եղբայրութիւնս մեր հաստա-
 » տուն պահելով օրհնեա՞ . զի մի ոք օձտեալ 'ի բանսարկուէն
 » ելցէ արտաքս 'ի կորստական բաղանիսն . ամէն :

Ա . Մ . Ա



Բ. ՀԱՆԴԻՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԱՇԻՆ ԱՌԱՔԻՆԵԱՅ

ԱՐԸԱԿՈՒՆԻ Բ : ՏԻԳՐԱՆ ԱՐՏԱՇԻՍԵԱՆ ՀԱԶԱՊԱՆՑ

ԱՐՔԱՅ ՀԱՅՈՑ :

Յաղթող եւ քաջ արանց այր Արշակունին Տիգրան , արդարեւ իր անուանը ստուգաբանութեանը արժանի այն անձն էր՝ որ է այրեսց տէգ . իր նախատեսութեամբը եւ խնամքովը ՚ի մանկութենէ պատերազմական կրթութեամբ վարժուած եւ բնականաբար ալ քաջամարտ ըլլալով , Արտաշէսի աշխարհակալութեամբը Հայկազանց հարկատու եղող Յոյն եւ ուրիշ քաղմամբիւ Հայաստանի վրայ վազող թշնամի ազգաց դէմ՝ անդժեքի վահան եւ անպարտելի ախոյեան կանգնեցաւ . որով Հայկազանց քաջութեան երկիւղը հաստատեց անոնց սրտին մէջ , եւ անոնք ալ շատ ազէկ խնացան որ Հայք աշխարհա երեւելի ազգերէն մէկն են , եւ պատերազմելու կողմանէ ալ ահարկու՝ քաջ՝ յաղթող եւ յաջողակ :

Երբոր Յոյները Արտաշէսի մահը լսեցին՝ այս լուրը իրենց համար մէկ ամառնային եղանակ մը սեպելով , կատաղի օձի նըման սկսեցին Հայաստանին վրան վազել . բայց քաջ դիւցադն Տիգրան ասիկայ լսելով , անթիւ զօրք ժողովելով անոնց դէմն ելաւ՝ եւ պատերազմելով զարկաւ բոլորն ալ փախուց : Եւ մտածեց որ այս ընդարձակ տէրութեան կառաւարելը եւ ալ մէն ժամանակ յարձակուած թշնամիներէն պահելը դժուար պիտի ըլլայ , հետեւոր եւ դիւրին միջոց մը գտաւ . այսինքն փոքր Ասիայի կապաղովկիայի եւ այն բոլոր կողմերը Միհրդատայ յանձնեց՝ եւ Պոնտոսի Թագաւոր անուանեց զինքը . այն զարմանալի հանձարաւոր եւ զօրաւոր մարդն էր այս՝ որ երբեմն Տիգրանայ հետ եւ երբեմն անոր օգնութեամբը ել

կարատեւ սոսկալի պատերազմներ ընելէն ետեւ շատ թա-
ղաւորութեանց տիրեց , որ քսանուերկու թագաւոր ալ իրեն
ծառայեցնել տալով՝ անոնց ամէն մեկուն հետ իրենց լեզու
աւար զատ զան կը խօսէր առանց թարգմանի :

Եւ երբոր Տիգրան Հռովմայեաց պատերազմներէն քիչ
մը դադարեցան , Սելեւկիացւոց թագաւորութեան մէջ խռու-
վութիւն իյնալով իշխանները ուղեցին որ իրենց տերութիւնը
բոլորովին Տիգրանայ յանձնեն , եւ անոր հզօր իշխանու-
թեամբը կառավարվին . Տիգրան բազմաթիւ զօրքով գնաց
եւ Անտիոքոս իշխանն անկէց վռնտելէն ետեւ , բոլոր Ասորոց
երկրին տիրելով Անտիոքեայի մէջ Մազդատ անունով ուշիմ
եւ բազաքագետ իշխան մը իրեն տեղապահ դրաւ :

Ասորիք իրենց թագուհիէն գրգռուելով երբոր Տիգրանէն
ապստամբել ուղեցին , Տիգրան ալ բազմաթիւ զօրքով Ասորոց
վրայ յարձակեցաւ եւ Պտղոմայիսը առնելով Սեղինէ թա-
գուհին ալ բռնեց սպանեց : Եւ երբոր Հրեայք լսեցին թէ
Տիգրան այն կողմերն եկեր է , որուն զարհուրելի համբաւէն
վախնալով՝ որ չուրայ թէ Հրեաստանի վրայ ալ վազէ , դետ-
պան խրկեցին Տիգրանայ որ զթայ եւ իրենց չարիք մը չընէ :
Եւ Բագրատունիք ալ Հրեից ցեղէն ըլլալով՝ ազգասիրական
ողով շարժեալ մասնաւոր աղաչանքներ ըրին . Տիգրան ալ
գթալով անոնց վրայ՝ խոստացաւ որ չարիք մը չընէ :

Երբոր Միհրդատ շատ մը զօրք Տիգրանէն օգնութիւն
առնելով Հռովմայեցւոց Ղուկուղոս սպարապետին հետ պա-
տերազմեցաւ , իր զօրաւարներէն շատը Հռովմայեցւոց կողմը
անցան , Միհրդատ տարակուսելով Տիգրանին քովը փախաւ :
որ այս փախուստը թէ ազգին եւ թէ տերութեան պատուոյն
նուաստութեան նշան մը ըլլալուն համար , սաստիկ բարկացաւ
վրան : Եւ Ղուկուղոս իմանալով որ Տիգրան բարկացեր է
Միհրդատայ վրայ , դեսպան խրկեց որ Միհրդատը իրեն մատ-
նէ . բայց Տիգրան իր խոհական հանճարեղ մտօքը իր կրիցը
վրայ ալ թագաւորելուն կերպը գլտնալով , եւ Միհրդատայ
իրեն պէս քաջ ըլլալը եւ անոր այնչափ երախտիքները միտքը

բերելով, թշնամին իր ամօթալի յոյսէն զրկելով՝ խայտառա-
կաբար ետ խրկեց դեսպանը . եւ աւելի մտերմութեամբ եւ
սիրով, Մեհրդատայ տասը հազար զօրք տալով Պոնտոս խա-
ւրեց : Նոյն միջոցին Ղուկուղոս պաշարեց Տիգրանակերտը
որուն վրայ եկաւ Տիգրան երեք հարիւր հազար զօրքով . բայց
Հռովմայեցոց զօրացը սակաւութիւնը տեսնալով արհամար-
հելով ըսաւ . « Թէ որ դեսպան եկեր են շատ են . իսկ թէ որ
թշնամի . քիչ » . այս պահասաւոր հպարտ վարմունքը իր վրայ
անհոգութիւն մը տիրելով՝ պատերազմի պատրաստութիւն
ալ չըրաւ . եւ Հռովմայեցիք սիրտ առնելով Տիգրանը վա-
խուցին եւ Տիգրանակերտն ալ առին : Տիգրան դարձեալ
բազմաթիւ զօրք խրկեց Ղուկուղոսին ետեւէն՝ եւ ճամբան
անոր զօրացը հանդիպելով չարաչար կոտորեց եւ շատ տեղերու
ալ յաղթութեամբ տիրելով Հռովմայեցիք Հայաստանէն բո-
լորովին դուրս հանեց . եւ մինչեւ անգամ Սապադովիայէն ալ
հալածեց . եւ Մեհրդատ ալ սաստիկ վրէժխնդրութեամբ վա-
ռուած, իր առջի կորսնցուցած տեղերը Հռովմայեցիներէն
առնելով իրենց բոլոր աշխատութիւնը անպտուղ ըրաւ :

Այս ամէն յաղթութեան լուրը բոլոր Հռովմ տալածուե-
ցաւ . սոսկաց խռովեցաւ Ճանչցաւ Հռովմ, որ մինակ ինքն չէ
եղեր քաջութեան մէջ համբաւաւոր . Ասիայի խորերուն մէջ
սրատես աչքով արթուն եօթնագլուխ վիշապ մըն ալ կայ եւ
դեր, այն արեւելեան Հայկազն հսկային բազկացը զօրութիւնը
ուժը՝ իրենց գոռոզութենէն խոնարհեցնելով, Հռովմակաւ
զօրութեան եզական չըլլալը եւ աշխարհիս մէջ ուրիշ զօրաւոր
եւ աւելի քաջ ազգ մըն ալ չլիալը ճանչցուց իրենց :

Բայց ափսոս որ Տիգրան իր Արաւազդ որդւոյն իրեն ար-
ժանաւոր յաջորդ չըլլալը տեսնալով, թէ իր ծերութեան ժա-
մանակը եւ թէ մեռնելէն ետեւ ազգին թշնամիներուն յար-
ձակմունքէն ազատ ըլլալուն համար պատրաստութիւն մը
տեսնալով, խոհեմութեամբ որոշեց որ Պարսից Արշեղ թա-
գաւորին հետ հաշտութիւն ընէ . բայց գիտէր որ առանց նա-
խագահութիւնը անոր տալու անկարելի է բարեկամութիւն

հաստատելը, նախատեսութիւն ընելով կիմանար՝ որ եւ իր մեզ
նեկէն վերջը նախագահութիւնը կարող պիտի ըլլայ առնելու,
իր ձեռքովը տուաւ նախագահութիւնը Արշէկին :

Տիգրան աւելի կրօնասէր ալ ըլլալով՝ Յռնաստանէն բե-
րած կոռօքերը, զան զատ քաղաքներու մէջ դնելով՝ նախա-
լարներուն պատուիրեց որ անոնց շաղէկ պատիւ ընեն . որ Ա-
տուր անուամբ Բագրատունի ճշմարիտ Աստուածապաշտ նա-
խարարներէն մէկը՝ աստուածները նախատելուն համար լե-
զուն կտրել տուաւ :

Այս դիւցազունը իր քաջութեամբը գրեթէ բոլոր աշխարհ
դողացուց : որ Արտաշէսի աշխարհակալութենէն ալ վար չէր
մնար իր յաղթութիւնները . բայց ասորը աւելի չափաւոր էր եւ
աւելի գութ ունենալով՝ Հրէից աղաչանքին մօտիկ ըրաւ եւ
իրենց եկիրներուն մէջ ոտք չկոխեց : Բայց շատ ազգերու
տիրելով՝ մինչեւ անգամ օտար ազգի պատմիչներն կարծեցին
թէ Հայոց Թագաւորութիւնը Տիգրանէն սկսած ու Տիգրա-
նով լմնացած է . Հռովմայեցւոց պատմիչներէն շատը կը գրեն
թէ շատ Թագաւորներ Տիգրանայ գերի ըլլալով, անոնցմէ
չորսը միշտ իր բովը կը ծառայէին . եւ երբոր ձիով տեղ մը
երթար՝ անոնք իրենց Թագաւորական զգեստովը չորս կողմէն
քալելով կերթային . նոյնպէս ամէն դատաստանական եւ քա-
ղաքական հանդէսներու մէջ ոտքի վրայ դիմացը կը կենային :

Տիգրան աւելի աշխատասէր . եւ երկայնամիտ ըլլալով, ա-
մենեւին չէր յուսահատեր ձախորդութեան ժամանակը . եւ
այս բնական ձիրքերովը միշտ անպարտելի էր իր քաջութիւնը
միայն թէ այն սխալմունքն ունեցաւ, որ իր վրայ աւելի վտա-
հանալով Տիգրանակերտի պատերազմին մէջ յաղթուեցաւ .
վասն զի չդիտեցաւ թէ բնականաբար ամբարտաւանութենէն
ինչ տեսակ տեսակ չարիքներ ու անկարծելի թշուառութիւններ
յառաջ կուգան, բայց ետքը իմացաւ զգաց իր բրած սխա-
լմունքը : Եւ բնականաբար աւելի խոհեմ եւ վեհանձն ըլլա-
լով՝ Միհրդատը Թշնամոյն ձեռքը չմատնեց :

Յայտնի է ինչպէս որ ամէն պատերազմի մէջ չնչին եւ

փոքրիկ դժբաղդ դիպուած մը պատահելով՝ յաղթութիւնդ
կորսնցնել կուտայ, հապա որչափ եւս առաւել այն մեծ ձա-
խորդութիւնը որ Տիգրանայ պատահելով երբեմն Հռովմայի,
ցոյցմէ յաղթուեցաւ : Այսինքն երբոր իր Տիրան որդին ա-
պստամբելով՝ Պարսից Թագաւորին օգնութեամբը Արտաշատ
քաղաքը պաշարեց, նոյն միջոցին Տիգրան բուռն զօրու-
թեամբ հալածեց Տիրանը : Եւ ան ալ տարակուսելով Հռով-
մայեցւոց Պոմպէոս սպարապետին ապաւինեցաւ՝ եւ անոնց
առաջնորդութիւն ընելով թշնամին դիւրութեամբ Հայստոտան
մտցուց : Այս մասին Տիգրան խոհեմութիւն ընելով Պոմպէ-
ոսի դէմ դնելու դժուարութիւններն զգալով, Հռովմայեցւոց
այլ եւ այլ տեղեր տալով հաշտութիւն բրու :

Վմանապէս ահարկու եւ քաջասիրտ Միհրդատն ալ այսպի-
սի ձախորդ դիպուածի մը հանդպեցաւ . որ իր ազաւազելի
եւ սգալի մահուանն ալ պատճառ եղաւ : Իր փառամոլ եւ
ինքնահաւան Փառնակ անունով որդին ապստամբելով՝ Հռով-
մայեցւոց կողմն անցաւ՝ եւ անոնց օգնութեամբը Միհրդա-
տայ տեղ Թագաւոր եղաւ . եւ Միհրդատն ալ որ բերդի մը
մէջ ամրացեր էր, վախնալով եւ մտածելով՝ որ չբլայ թէ
Հռովմայեցւոց ձեռքը գերի խնայ . որ իր բաջութեանը եւ
համբաւոյն սոսկալի մեծ ամօթ մը համարելով, իր բնտանեացը
Թոյն տալով ինքն ալ Թոյն վրայ խնալով մեռաւ : Թէ որ
այս չարիքը չըլլային՝ Հռովմայեցիք բնաւ անգամ մը չ'պիտի
կրնային յաղթել Հայոց :

Տես անմիաբանութեան եւ երկպառակութեան ամենա-
դառն ոգին՝ ինչ սոսկալի եւ անկարծելի թշուառութեանց
պատճառ կըլլայ . ինչ յաղթութիւններ եւ փառքեր կը կոր-
նցնէ . ինչ անսպարտելի քաջ եւ զօրաւոր արանց ոսկորները կը
փշրեցնէ . տես, ինչպէս երկար ժամանակներով բազում աշխա-
տութեամբ արեամբ եւ քրտամբ ձեռք ձգուած քաղաքները
համբաւաւոր Թագաւորութիւնները, զարմանալի մեծագոր-
ծութեամբ շինուած շէնքերը կործանող կայծակի նման՝ մէկ
վայրկեանի մէջ ողբալի կերպով բնաջինջ կընէ : Այս անմի-

արանութեան չար ոգւոյն հետեւող բիրտ վատաբարոյ ան-
 ձինք, թէ եւ ամէն ազգի մէջ ալ գտնուելոյ են՝ բայց մեր
 ազգին մէջ շատ անգամ պակաս չէ եղեր . ինչպէս որ պատ-
 մութեանց մէջ իրենց չար յիշատակներէն յայտնի է . այս ա-
 խտը չէ որ քանի՞ քանի՞ անգամ թիւնաւորներ է ազգերնիս, եւ
 քանի՞ քանի՞ տեղամ անոր թշուառութեան եւ կործանմանը
 պատճառ եղեր է . Ասոր համար է որ մեր երանելի Սուրբ
 Եղիշէ վարդապետը ազգին ցաւալի եւ միանգամայն պանծա-
 լի պատմութիւնը նկարագրած ժամանակը՝ աւելի ուշի ուշով
 պնծած եւ քննած է , թէ ազգերնու մէջ միաբանութիւնը
 թէ ըստ հոգւոյ եւ թէ ըստ մարմնոյ ի՞նչ սքանչելի եւ հրա-
 շալի մեծագործութիւններ ըրած է , եւ անմիաբանութիւնը
 ի՞նչ ողբալի եւ ամենադառն թշուառութեանց պատճառ ե-
 ղած է . ասոնք անձամբ սլ տեսնալով կարճ եւ համառօտ ի-
 մաստալից կերպով մը կը վճռէ ըսելով թէ « Զուգութիւն
 է մայր բարեաց՝ անզուգութիւն ծնող չարեաց » : Այս եր-
 երեք բառով վսեմ իմաստով զարդարուած խօսքիս մէջ շատ
 ընդարձակ խրատներ եւ բարոյականներ կը պարունակէ . ու-
 թուն վրայ հատորաւոր գրքեր կընայ շինուիլ : Որ արդարեւ՝
 միաբանութիւնը , ամէն մէկ անթիւ տեսակ տեսակ բարու-
 թեանց մայր է , եւ անմիաբանութիւնը ամէն մէկ անկար-
 ծելի չարութեանց եւ թշուառութեանց սոսկալի միջապիներ կը
 ծնանի, որ իր թիւնալից եւ մահաբեր ստամոռներովը յու-
 սահառեցուցիչ պատիժներով անխղճութեամբ կը մահացնէ
 զմարդս . սչ անմեղին կողորմի , եւ ոչ առաքինիէն ակնածու
 թիւն կընէ . ոչ բաջին կայծակնացոյտ աչքերէն կը զարհուրի,
 եւ ոչ տկարին աղաչանացը կը լսէ . մէկ խօսքով ոչ Աստուած
 գիտէ . եւ ոչ մարդկութիւն . եւ իր մէկ հատիկ չաստուածը իր
 չար եւ մոլի ցանկութենէն յառաջ եկած կամբը 'ի դործ
 դնէն է . ապա ուրեմն այսպիսիներն են այն Աստուծոյ դէմ
 պատերազմող թշնամիները, որ ազգին դէմ անմիաբանութեան
 չար ոգւով լցեալ եղեռնագործութիւններ ընելով՝ իրենց ամե-
 նաւար յիշատակը պատմութեանց մէջ ձգեցին զացին . եւ աշ-

խարհիս մէջ ալ Աստուածային անդար վրէժխնդրութեամբը իրենց արժանաւոր պատիժնին ալ անին՝ Թէ եւ ըրած չարութիւնէն ալ զղջացան՝ բայց շատ ուշ ինչպէս որ Սուրբն Եղիշէ վարդապետը կրօն վստակայ համար՝ Թէ « Որդեալից մարմնով անտակեցաւ իբրեւ զչուն » :

Եւս անմխարանութեան ողիէն ինչ տեսակ զանազան չափք յառաջ գալուն փորձ ըլլալով այն իմաստուն Թաղաւորին մէկը, իր մահուան ժամանակը Սուրբ գրքին մէջի « Եղիսայր յեղծօրէ օգնեալ իբրեւ զքաղաք ամուր » առածին իմաստը գեղեցիկ զօրաւոր ծրինակով մը գործնական կերպով իր որդւոցը կը բացատրէ : այսինքն շատ մը երկայն բարակ կըստ փայտեր մէկզմէկու քով դնելով ամուր մը չուանով կը կապէ՝ որ ահագին հաստը գերան (տիրէկ) մը կը ձեւանայ՝ եւ որդւոցը ձեռքը կուտայ՝ եւ հրաման կրնէ որ կոտորեն, անոնցմէ ամէնէն աւելի զօրաւոր ուժ ունեցողն ալ որ եւ իցէ կերպով չը կրնար կոտորել. դարձեալ հրաման կրնէ որ չուանը քակեն եւ անտոներ վայտերը մէկզմէկէ բաժնուելովը՝ մէկիկ մէկիկ կրնան կտրուելով կոտորել : Իմաստուն Թաղաւորը խրատ տալով կը պատուիրէ անոնց ըսելով Թէ ահաւասիկ դուք ալ մէնքդ եղբայրէք՝ Թէ որ ամէնդ մէկ տեղ մէկզմէկու հետ սիրով եւ հոգով մխարանութեամբ կապուած ըլլաք՝ բնաւ մէկը ձեզի չկրնար անիրաւութիւն մը ընել եւ չնչին չարիք մը անգամ չեն կրնար հասցնել. եւ ձեր բոլոր Թշնամեացը դէմ ահարկու կերեւաք. բայց Թէ որ իբրեւ օտար՝ մէկզմէկու հետ անմխարանութեամբ եւ ատելութեամբ վարուիք, անտարակոյտ եղիք որ այն ժամանակը ձեր ամենատկար Թշնամիները անգամ այն փայտերուն նման ձեր մէկզմէկէ քակուած ըլլալը տեսնալով, չուանով մը վրայ կը հասնին՝ եւ ամենքնիդ ալ դիւրութեամբ կը կոտորեն եւ ժողովուրդնիդ ալ ոտնակոխ կրնեն : Արդարեւ Թաղաւոր մը հայր մը ասկէց ալ աւելի ընտիր եւ պատուական խրատ չկրնար տալ իր որդւոցը եւ ժողովուրդը եղբանկութեանը համար . անանկ խրատ մը՝ որ բոլոր իր որդւոցը եւ ժողովուրդը ձգած հարստութեան փառաց եւ պա-

տւոյ ժառանգութիւնէն ալ գերազանց՝ երջանկութեան ըն-
տիր միջոց մ' է :

Ահա աշխարհիս մէջ ամէն ատեն կը տեսնամք անմիաբա-
նութիւնէն յառաջ եկած չարիքը, եւ միաբանութեան ոգւոյն
հետեւող այն երջանիկ անձերը, որոնք միշտ ուրախութեամբ
բարւոյն կը հետեւին առ 'ի յօգուտ եւ յերջանկութիւն հո-
գւոյ եւ անձին՝ յօգուտ ընկերին եւ մանաւանդ ազգին :
Ինչպէս որ մարդս որ եւ իցէ օգտակար բան մը սորված ըլլա-
լով ուրիշին սորվըցնելու ժամանակը բնականաբար աւելի
վարպետ կըլլայ, ասանկ ալ այն ժամանակը բուն ճշմարիտ
երջանկութիւնը կզգայ մարդս՝ որ ժամանակ որ ուրիշներն ալ
երջանկացնէ :

Տ. Կ. ԴԱՍՓԱԿՃԵԱՆ :

Դ. ՏԵՍԱՐԱՆԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՑ

ԿԱՆ ԿԱՄ ՀԱՄԻՐԱՄԱԿԵՐՏ

(Հարո՛ւնալո՛ւ-ի-նը

ԿԵ՛ս ԷՐԵ՛ս 211 :)

Այնպէս բերդի հարաւային արեւելեան դիմացը լայնածա-
ւալ քառատոտուն սաւաննաձեւ դաշտ մը տարածուած է՝ փոքր
ինչ 'ի ծովն կոյս շեղուած, վեց քառակուսի մղոն ընդարձա-
կութեամբ. որն որ ամառան ջերոտ եղանակին իւր տապն կը
զօվսցնէ՝ վարագ. լեռան չորս կողերէն քամուած առատա-
ջուր վտակներով. որով եւ կը սնուցանէ շատ ընտիր տեսակ
հատեղէններէն 'ի զատ, նա եւ բազմատեսակ առատ մրգե-

դէններ : Այս մեծ դաշտիս հիւսիսային կողմէն դէպի յայտ
 ւելս չորս ու կէս մղոն ընդարձակութեամբ տարածուած է
 Վան քաղաքի Արուարձան Այգեստանք բիւրազուարճ գե-
 ղեցութեամբ : որ ունի երկու գլխաւոր փողոցներ : ասոնց
 մէկն կըսկսի անմիջապէս քաղաքիս պարտալի կէս մղոն բացէն
 եւ կաւարտի Սղգայ գիւղի տակն : Իսկ միւսն Ակոբի քառած
 տեղէն կըսկսի եւ կաւարտի մինչ 'ի Արր դար : Ճիշտ քառան-
 կիւն ձեւով ասոնց իրար կարած միջակէտին խաչ քրոյ կը
 սուի տեղացոցմէն : Ասոնցմէ 'ի զատ բազմաթիւ փողոցներ
 ալ կան մէկն միւսէն աւելի զուարճալի եւ սիրուն իւրաքան-
 չիւր փողոցի մէջէն երկուքէն մինչեւ հինգ առն ափնավճիտ
 բարեհաճ ջրեր խոտջալով կը վազեն , որոնց եզերքն ալ ուղ-
 ղագիծ կադգաւ զուարճալի ուսենիքը պատած են . եւ աս
 մասնային եղանակին երկար ժամերով խոնջեալ ճանապարհոր-
 ժացը վրայ զովացուցիչ շուք մը կը ձգեն : Փողոցներու դիրքը
 լայն եւ ուղղագիծ են . որոնց երկու կողմը վայելուջ կերպով
 շարուած կայ կրկնայարկ աղիւսահիւս տներ : չափաւոր միջոց
 իրարմէ հեռու ամէն մէկ տուն իւր դրանը յառաջ ունի եր-
 կու կամ երեք ջրվէժ . որոնց տեղացիք (չռիկ) կըսեն . տներ
 ալ կան որ փողոցի ջրոյ մէկ մասն ագուղայից մէջ առած
 են իրենց տանը սրահներու փառաւոր աւազանաց միջէն բա-
 լեցնելով . ուրկէ տանը բոլոր ջրոյ պակասութիւնը հոգացուե-
 լէն 'ի զստ' գեղեցիկ վայելչութիւն մը եւս կաւեցնէ նոյն
 շինութեան : Այս միակարգ շարուած տներուն ետեւը վայել-
 լուջ եւ բազմաբեր որթատունկ այգիներ կան որ կընուցա-
 նեն միանգամ եւ տեսակաւոր մրգեղէններ , որոնց ստորագրու-
 թիւնը հայրենասէր Այրարատեան Հրաւիրակն իւր չափաբե-
 րական սողերովն կը բացատրէ այսպէս :

« Ծամարան շոյո գայ 'ի բիր ասիւն ծիրան վաղահասիկ ,
 « Զայրմանայ որ զաչս իւր ծառոյն 'ի գեղ յառեալ դիտէ ,
 « Ար ծիրանի եւ դեղնաթոյր գունով պըճինն ճիւղքն բոլոր
 « Մինչ մեղմով շընչէ հողմինչ եւ կամ ելեալ շարժին մանկտիւր :

կեցաւ. որն որ իւր տեղոյն յարմարութեամբն մինչեւ ցայսօր
թէ նորանոր շինութեանց եւ թէ Սպասուց առաւելութեամբ
շարունակ պայծառանալու վրայ է :

Գ. Յայնկոյսներու Ս. Աստուածածին եկեղեցին, որ Այս
գետանու հիւսիսային արեւելեան կողմն շինուած է : Ասոր
համար կրօնն թէ առաջ յատուկ վանք է եղեր : Բայց հիմոյ
միւս եկեղեցեաց կարգն մնած է : Ունի 152 տուն ժողովուրդ
եւ երեք քահանայ :

Դ. Ս. Յակոբ եկեղեցի. առանց տաճարի փայտեայրկ. ու
նի 308 տուն ժողովուրդ երեք քահանայ :

Ե. Հայկավանից Ս. Աստուածածին եկեղեցի. հնաշէն, ամ
րակառոյց, փայտաշարկ : Ունի 253 տուն ժողովուրդ եւ եր
կու քահանայ :

Ասոր տեղոյն համար աւանդութեամբ կրպատմեն թէ մեր
Հայկ նահապետ պատերազմաւ Բելայ վրայ խաղացած ժա
մանակ իւր վանիը (իջեւան) հոս հաստատած է . եւ աւե
լորդ կարասիներ հոս թողլով ՚ի Հայոց ձոր Բելայ վրայ գնա
ցած է : Հայոց ձորոյ եւ այս տեղոյս իրարմէ հեռաւորու
թիւնը տասը մղոնաչափ է հիւսիսոյ ՚ի հարաւ :

Ս. Երոզրեալ հինգ մեծ եկեղեցեաց քովիւր մէկ մէկ հաս
ալ փառաւոր եւ բազմամանկաւ Վարժարաններ կան ինն ամ
րիէ ՚ի վեր հաստատեալ. որոնց բոլոր ծախքը իւրաքանչիւր ե
կեղեցին կը հոգսոյ եւ օր աւուր յառաջադիմութեան վրայ են :



Դ. ԲՈՒՐԱՍՏԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՑ

Մշակուած երկիրն բոյսերով չարերը կը թնդեն կոխկռտելով :

Անպատկառ լիբր ու անարդ մարդիկ ձանձրացուցիչ ճանձերու կը նմանին . որոնք որչափ որ անարդուին՝ այնչափ կը լրբանան :

Քիչ հարստութիւն ունեցողը՝ իր կարողութենէն աւելի առատաձեռն է , բան թէ շատ հարուստ եղողը :

Անզբաղ մարդուն միտքը փառաւոր ու ընդարձակ սրահի մը կը նմանի . բայց զբաղեալ եղողինը՝ բեռներով լցուած նաւակի մը :

Սարգուս որ եւ իցէ կատարելութեան կամ բարութեան մը սեփական տէր չըլլալը այն ժամանակը կը յայտնուի , որ ատեն նոյն յատկութեանց տէր ճանչցուելու համարմունքը ուրիշներէն ստանալու փափաքով , սնապարծութեամբ կամ թէթեւութեամբ եւ միայնգամայն սրտի անհանգստութեամբ՝ իս այս ինչ կատարելութիւնը ունեցողներէն եմ ըսելով կը պարծենայ . կամ թէ իօսքով չըսենէ ալ ինքզինքը ասոր անոր կը ցըցունէ , որնոր ակօսակ մը իմաստակ կը սեպուի :

Ոչ թռչուններուն խօսակցութիւնը չափ սահման միջոց ժամանակ ունի , եւ ոչ ալ շատախօս կանանց :

Գողութիւնը բանի տեղ չըղնող գողին գող ըլլալը անկէջ յայտնի կերեւայ , որ մինչեւ անգամ իր ստացուածքէն բան

մը գողցընել տալէն ետեւ ալ՝ առեր են կրսէ եւ ոչ թէ գողցեր են :

Համբերող մարդը երկարաշունջ ու վարպետ լուսորդի մը կը նըմանի. որ աշխարհիս պեկոծեալ ծովուն մէջ եղած բաթուժեան անգին մարգարիտը՝ գտնալու ու ստանալու կարող կըլլայ :

Լիշատ արհեստաւորը հարուստ ծառայէն երջանիկ է :

Խռովաւոր ու հակառակաւոր մարդոց վէճերուն ձայնը, հեղահամբոյր եւ խաղաղասէր անձանց ականջը պիտայցունող զուարճացուցիչ քնար մըն է :

Լիզահը ոսկին տեսնալու ժամանակը ինչ աստիճան սիրոյ զգացում կուենայ, մարդասէրն ալ՝ մարդ մը տեսած ժամանակը նոյնը կուենայ, տոջինը խռովութեան ու անհանգստութեան պատնալիքներ կզգայ, բայց երկրորդը՝ զուարճութիւն ու բերկրութիւն :

!) Ղըման խայթը խոհեմութիւն կտրվցընէ մարդու :

Կեղծաւորութիւնը շատ անգամ շահախնդրու թենէն յառաջ կուգայ սակից կը ծնանի անամօթութիւն. անամօթութենէն ալ վատութիւն — վատութենէն ալ անարդութիւն. անարդութենէն ալ թշուառութիւն :

Արդոս որչափ որ աշխարհիս ամեն մէկ արարածներուն վրայ զննութիւններ ընէ՝ այնչափ ալ Աստուծոյ վրայ քաջ ծանօթութիւն կստանայ. որ աշխարհիս մէջ ասկէց ալ գերազանց դիտութիւն չկրնար ըլլալ :

Ինչպէս որ իշամեղուն իր խայթովը ուրիշը վերաւորելու ժամանակը՝ ինքն սլ անբժկելի կերպով կը վընասուի, ուրիշին չարութիւն ընողներն ալ ճիշտ ստոր պէս կըլլան :

Հաւատարիմ խորհրդապահութիւն ունեցող կատարեալ եւ անկեղծ մարդը՝ ամենուն սիրելի է. եւ անոր բարեկամները միշտ անկեղծ եւ սրտակից կըլլան :

Ինքնահաւան ամբարտաւան մարդը ինքզինքին հաւան

ժամանակը՝ միանգամայն չհաւնիր ու կատէ ։

Ինչպէս որ ոչխարին բուրդոտ մորթը զինքը ցուրտէն կը պահպանէ՝ եւ ուրիշներուն զգեստին չը կարօտիր, ասանկ ալ առաքինի մարդուն պատուոյ արժանի ըլլալը՝ ուրիշներուն վկայութենէն կախում չունի . վասն զի ինքն ըստ ինքեան պատուելի է ։

Ի՞նչ գիտուն եղողը յստակ դատողութիւն չունենալուն համար, գիտութենէ յառաջ եկած քիչ մը զգացած լուսնորութիւնը ու մտքի ազատութիւնը՝ անհաւատութեան հետ կը շփոթէ, որ չարաչար կը սխալի ։

Ղեմարիտ սէր ունեցողը այն է, որ իր սիրելոյն պակասութիւններն ալ կատարելութիւններն ալ կը ճանչնայ ։

Սուտ զուլցելու մէջ համբաւաւոր եղող մարդը, զինքը ճանչցողներուն ծիծաղը շարժող զբօսացուցիչ խեղկատակ մըն է . որուն աւելի էշխ տուողը՝ պարզամտութեամբ իր ամէն մէկ խօսքին գարմանքով հաւատացող ունկնդիրներն են ։

Թարութեան կամ որ եւ իցէ կատարելութեան մը հասնելու համար մարդու աւելի ուժ եւ զօրութիւն տուողը, օրինակը՝ եւ հետեւաբար նախանձաւորութիւնն է ։

Վսճառականութիւնը ծովային ճանապարհորդութիւն մըն է, որուն համար ամէնէն առաջ նաւ մը պէտք է՝ որ է դրամագլուխը . նաւապետը՝ խոհեմութիւնն ու նախատեսութիւնն է . կողմնացոյցը՝ գիտութիւնն ու հաշուետումարն է . ղեկաւարը՝ խոնարհամտութիւնն ու բարեսրտութիւնն է . ժամանակը՝ անոր հողմալից առաքասաններն են . խարիսխը՝ ընտիր եւ փորձ բարեկամներն են . նաւաստիները՝ ժրջան աշխատութիւնն ու հանձարն է . նաւին ամրութիւնը՝ հաւատարմութիւնն եւ չափաւոր ծախքն է . դրօշակն ալ լեզուադիտութիւնն է . եւ այս նաւին յաջող եւ անվտանգ կերպով ճանապարհորդութիւն ընելու ձեռնառութիւն ընողը՝ ամենէն աւելի հովին ու ծովին հրամայող աներեւոյթ ձեռքն է . ասանկ կատարելագործեալ միջակի մէջ եղող նաւը բնաւ տեղի մը չը

Մատուիր :

Աշխարհիս նեղութիւնը փորձանքը՝ առաքինի մարդուն համար՝ Յօնան մարգարէն կլլող կէտ ձկանը կրնանի : որն որ որչափ որ նեղութիւն տայ՝ չիրնար վնասել . եւ Աստուծոյ հրամանաւ ժամանակէ մը ետքն ալ երջանկութեան ցամաքին խաղաղ եղերքը կը հանէ :

Անկեղծ սէրը՝ բարեօրնա եւ ազնիւ ոգիի մը բնական յատկութիւնն է . որ այս առաքինութիւնը ստացողը կեղծաւորութենէ ազատ ըլլալով , միշտ վեհանձն է , եւ սրտի մեծ հանգստութիւն ունի :

Քաղաքամարտութեան կանախն մէջ մեծ ամօթ եւ անտիքան է՝ թեթեւամտութենէ յառաջ եկած խօսակցութիւններու չարժմուկները բնելը . որոնցմէ չգոռոշացողները միշտ կանաքաւորն ու ծաղր կըլլան ամենուն :

Այլ եւ իցէ կատարելութեան վրայ ամբարտաւանութեամբ արթնցողը՝ նոյն բանին մէջ ունակութեամբ ամօթութիւն չունենալը կը յաւանէ :

Խօսակցութեան մէջ շատ քիչ գործածական առածներ բանեցնելը՝ խօսքը քիչ մը կը վայելացընէ . բայց յաճախ որ ըլլայ կը աղեղացընէ ու ծիծաղելի կընէ :

Անորոշ թափաւորի մը նման նոսր պէտք է իր պալատը հագայ ու երջանկացընէ որ է իր ընտանիքը ու ազգականները : երկրորդ իր մայրաքաղաքը՝ դեղեցիկ շէնութիւններով զարդարէ ու բնակչացը խնամք տանի , որ է իր ազգը . երրորդ իր կուրաք ունեցած ուրիշ քաղաքներն ալ հոգայ՝ որ է բոլոր մարդկային ցեղին վրայ ունեցած նուիրական պարտքը . այսինքն այն՝ որ ուրիշները իրաւամբ մեղմէ կը պահանջեն . առանկ մարդ մը թէ կատարեալ է եւ թէ երջանիկ :

Հիմակուան դարուս անհաւատ կարծուածները մէյմէկ խեղկատակ յիմարութիւն սիրող ձեռնածուներ (հօգեպապ) են . որոնք իրենց վարպետ ճամբաներովը ու խօսքերնուն այլակերպ գարձուածներովը սրտըամիտներուն միտքերը կը փո-

Թե՛ն ու կը խաբէն . որոնց խարդախութիւնն 'ի լոյս հանող վար-
պետը՝ մարդուս բնական զգացումն ու սուրբ գիրքն է ։

Ինքնահաւան մարդը՝ իր խնդրախ միջոցներուն ապաստա-
նելով, ամէն բանի մէջ կարող էակի մը պէս կը պարծենայ ։
Բայց անոր մոգքին տկարութիւնը քիչ ժամանակէն յայտնուե-
լով կը խայտառակի ։

Սարդս որչափ որ խելացի եմ ընէ՝ այնչափ խենդ է . չարը
այն է որ ասանկներ շատ ըլլալուն համար՝ աշխարհս յիմա-
րանոց դարձեր է ։

Ով որ ընդհանուրին գովելին սիրելին ու հաւատարիմը
պարտաւելու ու պախարակելու յօժարամիտ ըլլայ, ընդհանու-
րին դէմ Թշնամութիւն ընողներուն հետ չար խորհրդակից՝
եւ միանգամայն անոնց դասէն ըլլալը կը յայտնուի ։

Աղքատին սիրող միշտ արցունքով լեցուած ըլլալուն հա-
մար , ամենափոքր վնաս մը կամ սիրտ ծակելու խօսք մը լսե-
լուն պէս՝ իր ունեցած վէրքերը կը նորոգուի՝ եւ անոնց վրայ
կսկծեցուցիչ այրող դեղեր թափուած կը ըլլայ . որուն ներքին
անմուռնչ արցունքը ողբը՝ անտուածային արդար վրէժխնդ-
րութիւնը կը չարժէ այն չարագործին վրայ . որնոր անտարակոյս
չարաչար կը պատժուի ։

Ուրիշին որ եւ իցէ Թշուառութեանը վրայ խնդացողը՝
ծաղը ընողը արհամարհողը , անտարակոյս պէտք է ըլլայ որ
ինքն ալ օր մը նոյն վիճակին մէջ պիտի իյնայ ։

Իշխան մը անձամբ այնչափ չկրնար իր հրամանները ազ-
դու ընել եւ ուզածին պէս 'ի գործ դնել տալ իր հպատակ-
ներուն , որչափ որ իր անուանը ու համբաւոյն հեռուանց ազ-
դեցութեամբը՝ պաշտօնեաներուն ձեռքով կը կատարվի ։

Տ. Կ. ԳԱԼՓԱԿՃԵԱՆ ։

ԵՐԷՆ Ե՝ ԳԱՅԼ

Խիստ կատաղի երկու շուն,
 Ջիրար գրկած կը կրճուեն.
 Գայլն անօթի հեռււանց,
 Մեծ խընդուծեամբ կը լեցուի.
 Արսէ երթամ մօտիկնամ,
 Երբ իրարու կը խղղեն,
 Ես ասդիէն վազելով,
 Հուտով կըրնամ բրզբ. քտել.
 Թէպէտ վազեց այս մեքով,
 Բայց զզջացաւ չարաչար.
 Ջի շունք տեսան որ կուգայ,
 Իւրեանց բնութեան թշնամին,
 Ար հաշտուին հոն շուտով,
 Գայլին վրայ կը հասնեն.
 Մէկէն զանի կը պատռեն,
 Ետած կընեն մեծ խընդում.
 Սա օրինակ այն մարդուն,
 Որ ընկերին սուտ կըռիւ,
 Իւրեան առիթմը առած,
 Առ զէ շուտով մօտիկնաւ,
 Մահեր ձգել անոնց մէջ.
 Բայց առ երեսս կըռուարաբ,
 Այն անմըտին ջանքն մեծ,
 Իւրեանց կատակ մը առած,
 Ծաղի կընծն անոր խելք.
 Ոչով անմիտ թշնամին,
 Արագբըլուխ զըրաջան,
 Արլայ ամօթ խայտառակ.

Արշալու. Յ. Աւետիս

Ժառանգաւորաց Վարժարանի.

Ե . ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

ՔՆԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ո՛վ աւագանի եղբարք, մի՞թէ ձեր սիրտն քար է :
կասեն՝ թէ ազգի սէրն ամենայն ցաւի ճար է ,
Քառի վախճ է Սէյեադն ծածուկ դարտով տկար է :
Ի՛նչ կուլի մին ճար անէք, չի ասէք՝ թէ օտար է :

Ըստուած չար աչքից պահի՝ ձեզպէս հարուստ մարդ չիլի :
Աշխարհքն մին մինով ասն՝ ձեր զարդի չափ զարդ չիլի ,
Մեր նախնեաց ասած բան ա՛յ . Հայ աղգից նամարդ չիլի :
Սէյեադին մէք մոռանալ, մէք ասել՝ բէյխաբար 1 է :

Ի՞նչ դուք չօգնէք ձեր ազգին, ուրիշ ազգի ինչին ա :
Նրանց համար՝ ես եթէ լինիմ, չի լինիմ, մին ա ,
Ազգի սէրն Սէյեադին մօտումն թանգագին ա ,
Ամէն բանից լաւն է եւ աշխարհքին բարեբար է :

Ըմէն բանից աւել է ձեր դատարի ողջոյն տալն ,
Ցաւն նրան չի նեղիլ, թէ հայցանէք ովհալն 2 ,
Ի՛նչ կուլի կտրացընէք Սէյեադի աչաց լալն ,
Սո՛մ մին հետ հոգին առնէք, որ ինքն էլ յօժար է :

Հարկ է, որ հարուստներն դիժի 3 էլ ողորմած լինին ,
Մեծատան առակը ժամուռն լսած լինին ,
Անգուժ մարդոյ պատիժն Ի՛նչ է՝ իմացած լինին ,
Սէյեադ, որ լսող չկայ, ողբալդ ինչու համար է :

Աշխարհքի հնուժիւնից եղանակն փոխվելայ :

Սէր բառն՝ առեղութիւն բառի տակին կոխվելայ,
Մարդկանց մօտին գազանն ոչխար է, գառն գէլ 4 ա,
Սէյեադ, մին լաւ իմացիր, էս դարն ինչպէս դար է :

Բանի էսպէս բան խօսես, կու շատանայ դարդերդ,
Ժամանակն կու փախչի, չեն կատարվիլ գործերդ,
Բաւական է՝ վերջ արա՛, ձեռից մի թողիլ խէյրդ 5,
Սէյեադ, միթէ քո լեզուդ մշտաբարբառ բնար է :

Թէ կամուժես մարդիկն իրանց հին ձեւն դառնան,
Էտուր երբէք ճար չկայ, որ երկիրն համբառնան,
Էնքան էդպէս կու մնայ, որ հող կըղառնան,
Սէյեադ, անցեալ օրերին տեսնալն անհնար է :

Հայոց ազգի միջումն ցաւ հարցանողն ո՞վ է,
Եթէ միշտ աղաղակես ականջ դնողն ո՞վ է :
Թէ սպանեն, հարայիդ 6, առիւր, հասնողն ո՞վ է,
Ազգիդ համար ինչ ասեն, Սէյեադ, դիմի էլ արդար է :

Լուսաւորչի ժառանգ ես, ազնիւ օճաղի 7 զաւակ,
Ազգդ աշխարհքին յայտնի, հայրդ քահանայ աւագ,
Տեսնուժես որ Հայերն չեն լինում բեզի քօմակ 8,
Գնա՛, ուր որ կամուժես, ընդարձակ ճանապարհ է :

ՊԵՏՐՈՍ Տ. ՅՈՎԱԼՓԵՆՆ

ՄԱԿԱԹԵԱՆՑ ՀԱՄԱԽԵՅԻ

ՍԵՅԵԱԿ ՄԱԿԱՆՈՒ-ԱՆԵԱԼ :

- 1 Անբեշէալ : 2 Որպիսի-ի-ն : 3 Բոլորովին : 4 Գայլ :
5 Բարի : 6 Աշաղալ : 7 Ցեղ : 8 Օգնական :

ԱՉԴ

Հայրենասէր բարեմիտ ընթերցողաց սրդէն յայտնի է՝ որ տպարանիս եւ իւր
աւերն պարագայից նորութեանը համար, իւրաքանչիւր տալիս թել թետ ֆալով
իւր ժամանակին չի հրատարակուիր : Ուրեմն անմեղադիր թող լինին նոյն
եմբերի մէջ պատահածն Սեպտեմբերով հրատարակելու :

ԱՆՁՆԱՆՈՒԻՐ ԳՈՐԾԱԿԱՆԷՔ .

ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ .

ՎԱՆ , Մկրտիչ Տ . Ատոմեան 'ի գրանոցի վասպուրական
Արժուոյն :

ԿԱՐԻՆ , Խաչատուր Խան Տ , 'Երսիսեանց եւ միանգամայն
գործակալ Տարօնոյ եւ Ռուսաստանի Հայոց :

ԲԱՂԷՇ , Մ , Ղարիպճան Աղա Մ , Հողիկեանց :


ՏՐԱՊԷՅՈՆ , Աղաճան Աղա Յովհաննիսեան :

ՊՕԼԻՍ , Պ , Յակովբ Աղուանեան վանեցի 'ի Պալթաճի Խան

ԶՄԻՒՌԻՆ , Պ , Սարգիս Տէր Մարգարեան վանանդեցոյ ,

ԲԵՐԻԱ ; Յովհաննէս Աղա Մխարբեան :

ՍԱԼԱՄԱՍՏ , Յակովբ Միրզայեան Մէլիք Յակովբեանց . մի-
անգամայն գործակալ Պարսկաստանի Հայոց :



ԳԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ի Վան , 'ի Կարին , 'ի Մուշ , 'ի Բաղէշ , 'ի Տրապիզոն 2 ու կէս
Օսմանցի քսան ղուրուշնոց արծաթ Մէճիտիէ :

Ի Պոլիս , 'ի Զմիւռլին , 'ի Բերիա , երեք արծաթ քսան
ղուրուշնոց Մէճիտիէ :

Ի Ռուսաստան եւ 'ի Պարսկաստան , այսինքն 'ի Տփլիս , յԱ-
ղէքսանդրպօլ , 'ի Դավրէժ եւ այլն , չորս արծաթ Մանէթ :

Գին միոյ տետրակի 6 ղուրուշ : Ճանապարհին ծախքը
Խմբագիրը պիտի վճարէ :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԵՍ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԵՆ ՀԱՐՑ

Միշտ քերթնահայր Անշէի Հայտնի Դպրոց

Բեռն 224

Տարածած Պանդիտի Հայրենասէր Հօր Վանայ Ի. Կ.

Պօլիս 229

ՀԱՆԻՄԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԵՆ ԱՌԱՔԻՆԵԱՅ

Արշիւնի. Բ. Տէգրան Արքայիս Բաժանի Արքայ

Հայոց : 232

ՏԵՍԱՐԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿԵՆ ԱԿՈՒՆԱԿԱՅ

Վան իմ Երաժշտիկ : 239

ԲՈՒՐԱՍԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ

Բարոյական Առաջ : 243

Առաջ երկու Եւ Գալ : 248

ԹԱՆԴԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

Պեպրոս Պէյ Մարտիկ

“ Բնար Հայաստանի ” : 249